ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիս 2025թ. ՆՄՈ/ 660 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ Ն 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի հուլիսի 8-ի N 34/09.2/21689-2025 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Մինչև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր դպրոցական շենքի կառուցման աշխատանքների ավարտը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 1-9-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել «Վաղարշապատի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով

ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Խորենացու 7 հասցեում գտնվող դպրոցի շենքում:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը և ֆինանսական վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, Դ.Ավետիսյան և Ա. Հակոբյան)՝ ապահովել սույն որոշման կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ.Պետրոսյանին, «Վաղարշապատի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ. Ներսիսյանին և վարչատնտեսական մասի համակարգող Լ. Միրզախանյանին, «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց» և «Վաղարշապատի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին (համաձայնությամբ):
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Մանվել Մելիքյանին: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-07-08 17:25:04 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ի կողմից